

210. Կովառա, գրի սղեալ եւ Կովռա. եւ յայտնի լինել 'ի գետեզերին Ջահանայ. զի գրէ Սմբատ, յամի 1322 'ի մեծ արշաւանին Եգիպտացոց՝ «Հեծեալն որ իջեալ էր առջեւ Կովառայ՝ կամուրջ կապեալ էին նաւերով 'ի վերայ գետին». տպագիրն սխալ եղեալ է առջեւ կռուոյ:

211. Բ. Անցմնցուկ կոչելի է ուղղագոյն եւս զձորակն եւ զջուրն որ ընդ այն անցանէ. յորոյ վերայ արկեալ էր կամուրջ 'ի վաղ ժամանակաց, եւ յետ բարձման տէրութեան Հայոց՝ պայազատ ոմն յազնիւ տոհմէ, Գրիգոր որդի Պաղտինի եւ եղբայր Լեւոնի, 'ի միջոցի 1450-60 ամաց նորոգեաց զմեծ կամար նորին, կամ որպէս ժամանակագիրն ասէ, «զմեծ աչքն՝ որ փլեալ էր. որ այժմ գիրն 'ի վերայ ճակատի կարմնճին կայ, որ հայի ընդ արեւմուտս. յիշատակարանն եւ անուն Գրիգորի 'ի վերայ թուականին»....: Պակասէ եւ թուականն եւ արձանագիրն յօրինակի գրոցն: Այս կամուրջ է՝ որում դարու միով յառաջ (1369), յանձնէր Քաջն Լիպարիտ առ վերջին Կոստանդին թագաւոր՝ զգուշանալ քաջ, զոր ոչ արարեալ նորայոցն՝ կալան զայն թշնամիքն, եւ 'ի դառնալն՝ սպանին զգօրավարն:

212. Միս. Բուսականք.– Հանգոյն Եղեգանն՝ յիշի յայլմէ Բժշկարանէ մերմէ՝ «Նֆլն, (կամ Սֆլա) ծառ է, 'ի Միս լինի: Նէֆլէ Արաբացոց, ըստ Պուասիէ բուսաբանի է *Erigeron trilobium*, Պառվու-խոտ կամ *Celsia parviflora* Dene.

214. Բ. Բազմաբնակութիւն Սսոյ.– Զոր ականատես Գերմանացին առ Մեծան Լեւոնիւ անթիւ ասէ զբնակիչս Սսոյ, ժամանակագիրն մեր, (ոչ գիտեմ յաւանդութենէ՝ եթէ 'ի գրոց) ասէ. «Միս քաղաքն 'ի ժամանակի թագաւորացն ՂԴԴ (94,000) խանայ էր՝ խարաճ տուող, բաց 'ի յազատացն. եւ այժմ (համարիմ 'ի կէս ԺԷ դարու) փոքր պարոնութիւն եղեւ, եւ չորս սուպաշըլըխ (ջրպետութիւն) ամէնն. եւ նստի 80 դրամով դատի, որ յետոյ 'ի 150 դապուն ? արարին (յաւելին) դատիքն. եւ է քաղաքն աւերակ, եւ տունս Հայ եւ Թուրք՝ ոչ աւելի քան 4500. եւ բուն Սսեցին 'ի սմա այժմ 150. եւ խանայս աւար ըզր? ԺԱ (11), եւ սանձախն ամենայն ԼԶ (36)»: Եթէ ուղիղ համարիցի թիւն 94,000, եւ խանայն՝ տուն, կարի ընդարձակ համարելի է Միս հանդերձ արուարձանօքն. զի գէթ 500,000 ոգիս պահանջէ այդ թիւ